HETQ.am-ի լրագրող
Գայանե Հովսեփյանին
/Էլ. փոստ՝ hovsepian.gay@gmail.com
Հեռ.՝ [redacted]

«Կոկ Սիստեմ» ՍՊԸ տնօրեն
Սնադա Քոքոբելյանից

Ի պատասխան Ձեր՝ 2020 թվականի օգոստոսի 14-ի գրության մեջ տեղ գտած հարցադրումներին, ստորև ներկայացնում եմ հետևյալ պատասխանները.

- *Հարց 1.Տեսչական մարմնի կազմած ակտի վերաբերյալ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ն առարկություններ ունի, թե ոչ: Եթե ունի, ապա խնդրում եմ մանրամասն նշել դրանք:*

  Պատասխան: «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ն համաձայն չէ ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի /այսուհետ՝ Տեսչական մարմին/ կողմից 2019 թվականի մայիսի 31-ին կազմված թիվ 9 Ակտի հետ /այսուհետ՝ Ակտ 9/: Տեսչական մարմնի կողմից իրականացված տեղազննումից և GPS կայանով տեղագրական հանույթից արձանագրված այն պնդումը, որ «Կոկ» ՓՀԷԿ-ի /այսուհետ՝ ՀԷԿ/ գլխամասային հանգույցը կառուցված է եղել ոչ հատկացված և ոչ էլ պետական գրանցում ստացած վայրում, այլ 11,5-14 մ ենթադրյալ շեղումով, չի համապատասխանում իրականությանը, քանի որ դա տեղ է գտել քարտեզների անհամապատասխանության արդյունքում, որն արդեն իսկ վերացվել է համապատասխան պատկան մարմինների կողմից և ստացել գրանցում ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից: Տվյալ անհամապատասխանության հետ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ն որևէ առնչություն չի ունեցել:

  ՀԷԿ-ի շինարարությունն իրականացվել է միջազգային ֆինանսական կազմակերպությունների համաֆինանսավորմամբ և շինարարության ողջ ընթացքն անցել է նաև միջազգային փորձագիտական խմբի շինարարատեխնիկական և էկոլոգիական հսկողության ներքո: Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման է հանձնվել Ընդունող հանձնաժողովի կողմից, որի կազմում, համաձայն նորմատիվ ակտերի, նաև ընդգրկված են եղել Լուսաձոր համայնքի ղեկավարը և նույն Տեսչական մարմնի ներկայացուցիչը, ովքեր իրենց ստորագրությամբ և կնիքով հաստատել են կատարված շինարարության համապատասխանությունը հաստատված նախագծին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Փաստում ենք, որ այն երկու մարմինները, որոնք օրենքի ուժով լիազորված են քաղաքաշինական գործունեության պետական տեսչական վերահսկողություն իրականացնելու, հաստատել են շինության օրինական կառուցված լինելը: Նշեմ, որ 2016-2017 թվականներին ՀԷԿ-ի շինարարության

ողջ ընթացքում և դրանից հետո ՀՀ համայնքների միջև սահմանազծերն ունեցել են այլ տեսք և «Կոկ» ՓՀԷԿ-ի գլխամասային հանգույցը ողջ ծավալով և իր հարակից տարածքով գտնվել է միայն Լուսաձոր համայնքում: Այնուհետև, ՀԷԿ-ի շահագործումից տևական ժամանակ հետո տեղի է ունեցել միջհամայնքային սահմանների ճշգրտում և քարտեզի փոփոխություն, որը, բնականաբար, որևէ կապ չունի Ընկերության գործունեության հետ:

Նշեմ նաև, որ Տեսչական մարմնի կողմից կայացված Ակտն ակնհայտորեն շոշափում է Ընկերության իրավունքներն ու օրինական շահերը՝ վերջինս որևէ կերպով ներգրավված չի եղել Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթում և, առավել ևս, հնարավորություն չի ունեցել ներկայացնելու ճշգրիտ իրադրությունը և արտահայտելու իր դիրքորոշումը: Ակնհայտ է, որ այսկերպ վարչական մարմինն իրականացրել է ոչ իրավաչափ վարչարարություն: 2019 թվականի դեկտեմբերի 6-ին Ընկերությունը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության աշխատակիցների կողմից ստուգման իրականացման և 2019 թ. մայիսի 31-ի հողերի օգտագործման և պահպանման խախտումների վերաբերյալ թիվ 9 ակտի կազմման գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին: Նշված հայցադիմումն ընդունվել է վարույթ:

- *Հարց 2. Ըստ տեսչական մարմնի կազմած ակտի, ՀԷԿ կառուցելու նպատակով 0.042 հա հողահատկացում է կատարվել (Կառուցապատման իրավունքով), այնինչ ՀԷԿ-ի գլխամասային հանգույցի մակերեսը կազմում է 0.143 հա: Ի՞նչ հիմքով է կառուցապատման իրավունքով տրամադրված հողի մակերեսից ավել մակերեսում շինություն կառուցվել:*

Պատասխան: Տեղեկացնում ենք, որ ՀԷԿ-ի գլխամասային հանգույցի կառուցման ժամանակ քաղաքաշինական փաստաթղթերում որևէ խախտում տեղի չի ունեցել, ուստի չկա որևէ ապօրինի շինարարություն: ՀԷԿ-ի կառուցման ժամանակ գործող կարգերի համաձայն՝ ՀԷԿ-երի կառուցման համար գլխամասային հանգույցը նախագծվել է, ՀԷԿ-ի նախագծերը հաստատվել և շինարարության թույլտվությունները տրամադրվել են ոչ միայն ջրընդունիչի մասով, որը հանդիսանում է ՀԷԿ-ի կողմից շահագործվող գլխադասային կառույցը (մեր օրինակում 0.042 հա-ի վրա կառուցված ջրընդունիչը), այլ շինարարության թույլտվություններն ու նախագծերը կատարվել են և ավարտական ակտը հատկացվել է նաև այն ամբողջական գլխադասային կառույցի համար, որը անհրաժեշտ է ՀԷԿ-ի գլխամասային կառույցի անխափան և անվտանգ ձկնանցարանի նորմատիվ ակտերին համապատասխան գործունեության և բնապահպանական նորմերն ապահովելու համար: Սա չափազանց կարևոր է հատկապես գետի վարարման ժամանակ՝ անվտանգության ապահովման և ավելացած ծավալով մեծ ջրահոսքերն ավտոմատ էլ ավելի հեշտ կերպով բաց թողնելու համար, որպեսզի ափամերձ տարածքում և ջրընդունիչի շրջակայքում չառաջանան ավերվածություններ: Այսինքն, ջրընդունիչից բացի, մնացած շինությունները, որոնք անհրաժեշտ են լրացուցիչ անվտանգություն ապահովելու, ամրացումների և ձկնանցարանի անխափան աշխատանքի,

բնապահպանական նորմերի ապահովման համար, կարող են չհանդիսանալ ՀԷԿ-ին պատկանող կառույց, սակայն բնապահպանական և անվտանգության կանոններից ելնելով և գետի հունի վարարումների ժամանակ ՀԷԿ-ի անխափան աշխատանքներն ապահովելու նպատակով Ընկերությունը պարտավոր էր կատարել այդ կառույցների շինարարությունը՝ նախագծով հաստատված կարգով, ինչն էլ շինարարության աշխատանքներն ավարտելուց հետո հաստատվել է ավարտական ակտով: Քաղաքաշինական փաստաթղթերն՝ այդ թվում շինարարության թույլտվությունն ու ավարտական ակտն ամբողջ ծավալով հաստատվել են համայնքի և Տեսչական մարմնի կողմից, առանց որի ՀԷԿ-ի ջրընդունիչը չէր կարող ստանալ պետական գրանցում: Ընկերությունը գրանցել է գլխամասային հանգույցի անբաժանելի և շահագործվող մասը հանդիսացող 0.042 հա մակերեսով ջրընդունիչը (համաձայն հողհատկացման): Ընկերությունը շահագործում է միայն գլխամասային հանգույցի ջրընդունիչի հատվածը, իսկ մնացած հատվածը հանդիսանում է ընդհանուր օգտագործման կառույց՝ ուղղված բնապահպանական և անվտանգության նորմատիվատեխնիկական կանոններին և գետի բնականոն հունը և հոսքը ապահովելուն: Ուստի, այդ հատվածի նկատմամբ հողհատկացում չի եղել, քանի որ դա ոչ թե ՀԷԿ-ի կողմից շահագործվող հատվածն է, այլ ընդհանուր օգտագործման հատված, որն անհրաժեշտ է առհասարակ բնապահպանական և անվտանգության նորմերն ապահովելու համար: Քանի որ շինարարությունն իրականացվել է բոլոր անհրաժեշտ քաղաքաշինական փաստաթղթերի հիման վրա, և հաստատված է ավարտական ակտով, ապա այս իրավիճակում խոսք անգամ չի կարող լինել շեղումների և, առավել ևս, ապօրինի շինարարության մասին:
Ավելորդ չէ նաև նշել, որ ՀԷԿ-ի գլխամասային հանգույցի ջրընդունիչին կից ընդհանուր օգտագործման օժանդակ շինությունները համարվում են ջրահեռացումների, անվտանգության և բնապահպանական նորմերը ապահովելու համար անհրաժեշտ կառույցներ, և առանց այդ շինությունների հնարավոր չէ ապահովել անվտանգության համապատասխան նորմերը՝ ինչպես օրինակ գետի ափամերձ տարածքների ողողումների կանխման հետ կապված խնդիրները: Տեղին ենք համարում նաև նշել, որ վերջին շրջանում ՀԷԿ-ում երկու անգամ տեղի է ունեցել բնապահպանական նորմերի ստուգում, և այդ ստուգումների ընթացքում որևիցե խախտում կամ անհամապատասխանություն չի եղել, ուստի և չի արձանագրվել:

- *Հարց 3. Ի՞նչ կատեգորիայի է գլխամասային հանգույցի հողը:*
  Պատասխան. Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ 14.02.2017 թվականի թիվ 14022017-11-0025 և 22.11.2019 թվականի թիվ 22112019-11-0025 վկայականների, Գլխամասային հանգույցի հողամասի նպատակային նշանակությունը ջրային է:

«ԿՈԿ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ

ՍԵՎԱԴԱ ՔՈՔՈԲԵԼՅԱՆ

«ԿՈԿ ՍԻՍՏԵՄ»
02639582